Գևորգ Էմին

Զգո՛ւյշ խոսիր Հայաստանում

Զգո՛ւյշ խոսիր Հայաստանում,-
Այստեղ ամեն գագաթ ու ձոր,
Արձագա'նք է տալիս հզոր
Եվ քո խոսքը հեռո՛ւ տանում...

Թե բարի են խոսքերը քո,
Հայոց լեռներն ակնածանքով
Կխոնարվե՛ն քո դեմ լռին՝
Բաշը քսած քո ձեռքերին:

Իսկ թե չար են՝ լեռները մեր,
Հրաբխի բնե'րն անմեռ,
Որ լռել են, բայց չե'ն հանգել,
Քեզ լավայո'վ կարձագանքեն,
Որ լեռնե'ր է քշում-տանում...
Զգո՛ւյշ խոսիր Հայաստանում...
Զգո՛ւյշ քայլիր Հայաստանում,-
Նե՛ղ են ճամփեքը լեռնական,
Երկու հոգու տեղ չեն անում,
Թե դեմ-դիմաց ելնեն հանկարծ.
Թե բարեկամ ես ու ընկեր,
Ա՛նց կկենաք իրար գրկած,
Թե դավով ես այստեղ ընկել,

Կգլորվես ժայռերից ցած.
Ո՞վ եղավ քո գալու վկան,
Գնալդդ ո՞վ է իմանում...

Նեղ են ճամփեքը լեռնական,

Զգո՛ւյշ քայլիր Հայաստանում:
Զգո՛ւյշ գործիր Հայաստանում,-

Մենք գահ ու թագ չե՛նք ունեցել,
Եվ... արքա՛ է ամեն մի հայ,
Զորք ու բանակ չենք ունեցել,
Եվ... սպա է ամեն մի հայ.

Ամեն մի հայ՝ լեռան մի ծերպ,
Ամեն մի հայ՝ ուրույն մի կերպ,
Ամեն մի հայ՝ մի Հայաստան
Բաժան-բաժան,
Անմիաբան,
Զատվա՛ծ, հատվա՛ծ,
Եվ սակայն՝ մի՝
Երբ սպառնում է թշնամին
Մեր դարավոր անմահ երթին
Եվ այս ժայռին թառած բերդին,
Որ Հայրենիք ենք անվանում...

Զգո՛ւյշ գորցիր Հայաստանում: